



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի, 2020 թվականի № 62-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N° 20-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության 10-րդ կետի 11-րդ ենթակետը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի 2021 թվականի կառուցվածքը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի:
2. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի 2021 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի:
3. 2020 թվականի հունվարի 1-ից ուժը կորցրած ճանաչել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի ապրիլի 26-ի N 20-Լ որոշումը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 դեկտեմբեր, 2020 թվականի

ք. Երևան

\_\_\_\_\_ Ա. Շիրինյան  
29 դեկտեմբեր, 2020 թ.

**ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**



\_\_\_\_\_ Ա. Շիրինյան  
 29 դեկտեմբեր, 2020 թ.

**ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ**

**Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմի 2021 թվականի համար**

N	Հաստիք	Հաստիքային միավորների քանակը
	<b>Աշխատակազմ</b>	
1	Աշխատակազմի ղեկավար	1
2	Գլխավոր խորհրդական	1
3	Հասարակայնության հետ կապերի պատասխանատու	1
4	Իրավաբան	1
5	Աշխատակազմի քարտուղար	1
6	Կադրերի տեսուչ	1
7	Խորհրդի նախագահի օգնական	1
8	Կայքի ադմինիստրատոր	1
9	Տնտեսավար	1
10	Վարորդ	1
11	Վարորդ-գրիչ	1
12	Տեխնիկական գծով մասնագետ	1
	<b>Ֆինանսատնտեսագիտական բաժին</b>	
13	Բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստ	1
14	Գլխավոր հաշվապահ	1
15	Բյուջետավորման և ֆինանսական հաշվետվությունների գծով մասնագետ	1
16	Ֆինանսական վերլուծաբան	1
17	Առաջատար մասնագետ	1
	<b>Ներքին աուդիտի բաժին</b>	
18	Բաժնի պետ	1
19	Գլխավոր աուդիտոր	1
20	Առաջատար աուդիտոր	1